«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 7
19.01.2026թ.

1. 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում կայացած Գիտական խորհրդի նիստերի ընթացքում ընդունված հանձնարարականների և որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ

1.1. Ընդունել ի գիտություն:

1.2. Հանձնարարել ՀԱԱՀ բոլոր պրոռեկտորներին՝ իրենց ենթակայության տակ գտնվող ստորաբաժանումներին տրամադրել լրացուցիչ մեկշաբաթյա ժամկետ՝ կուրսերի կատալոգների ձևանմուշները լրացնելու և Միջազգային կապերի դեպարտամենտ ներկայացնելու համար:

2. Դոցենտի գիտական կոչում շնորհելու մրցույթի կազմակերպման և իրականացման հարցի վերաբերյալ

2.1. ՀԱԱՀ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն հաստատեց հաշվիչ հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

2.2. Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու» կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները և հաշվի առնելով ՀԱԱՀ Գիտական խորհրդի փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները՝ Գևորգ Աշոտի Գևորգյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում՝ Զ.01.01 – «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա, ագրոքիմիա և ագրոէկոլոգիա» մասնագիտությամբ:

2.3. Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու» կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները և հաշվի առնելով ՀԱԱՀ Գիտական խորհրդի փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները՝ Հրաչյա Հայկազի Գրիգորյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում՝ Ը.00.00 – «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ:

3. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքների պահպանման և զարգացման ծրագրերի շրջանակներում՝ ՀԱԱՀ գիտական կազմակերպությունների և ստորաբաժանումների կողմից 2025 թ. ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունների քննարկման և հաստատման հարցի վերաբերյալ

Հաստատել Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

շրջանակներում 2025 թ. հունվար–դեկտեմբեր ամիսների ընթացքում ՀԱԱՀ գիտական կազմակերպությունների և ստորաբաժանումների կողմից կատարված աշխատանքների տարեկան հաշվետվությունները և երաշխավորել դրանց ներկայացումը ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե

- «Ոսկեհատի խաղողագինեգործության գիտական կենտրոն» մասնաճյուղ,
- «Գյուղատնտեսության մեքենայացման և ավտոմատացման գիտահետազոտական ինստիտուտ»,
- «Սննդագիտության և կենսատեխնոլոգիաների գիտահետազոտական ինստիտուտ»,
- «Գյուղատնտեսական կենդանիների սելեկցիայի, գենետիկայի և կերակրման հետազոտական կենտրոն»,
- «Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոն»,
- «Անասանաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության հետազոտական կենտրոն»:

3.2. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Թովմասյանին իրականացնել աշխատանքներ՝ համալսարանի ուսումնական և գիտական ստորաբաժանումների միջև համագործակցությունը ակտիվացնելու ուղղությամբ:

3.3. Հանձնարարել հանրային կապերի բաժնի վարիչ Ս. Ավետիսյանին սոցիալական տարբեր հարթակներում լուսաբանել ՀԱԱՀ «Սննդագիտության և կենսատեխնոլոգիաների գիտահետազոտական ինստիտուտի» Սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիաների բաժնի կողմից ֆեյսբուքյան «Սպառողի էջ»-ի գործարկումն ու գործունեությունը:

4. ՀԱԱՀ Բուսաբուծության և հողագիտության ամբիոնի հայցորդ Բիայնա Վահրամյանս Խոսրավիզդատ Վարթանի թեկնածուական ատենախոսության վերնագրում փոփոխություն կատարելու հարցի վերաբերյալ

4.1. ՀԱԱՀ Բուսաբուծության և հողագիտության ամբիոնի հայցորդ Բիայնա Վահրամյանս Խոսրավիզդատ Վարթանի Զ.01.02 - «Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն և բույսերի պաշտպանություն» մասնագիտությամբ ատենախոսական աշխատանքի թեման հաստատել «Հայկական և Իրանական ծագման փափուկ ցորենի (*Triticum aestivum* L.) մի քանի սորտերի երաշտադիմացկունության համալիր գնահատում» վերնագրով՝ Զ.01.02 - «Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն և բույսերի պաշտպանություն» մասնագիտությամբ:

4.2. Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավարն է գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անդրեաս Շմավոնի Մելիքյանը:

5. ՀԱԱՀ Բուսաբուծության և հողագիտության ամբիոնի ասպիրանտ Աննա Արտակի Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ

5.1. ՀԱԱՀ Բուսաբուծության և հողագիտության ամբիոնի ասպիրանտ Աննա Արտակի Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Արժեքավոր որոշ հատապտղային բույսերի *in vitro* բուսակների արմատակալեցում և *ex vitro* ադապտացում» վերնագրով՝ Զ.01.02 - «Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն և բույսերի պաշտպանություն» մասնագիտությամբ:

5.2. Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անդրեաս Շմավոնի Մելիքյանին:

6. Որակի գնահատման և ապահովման կենտրոնին ՀԱԱՀ միջին մասնագիտական կրթական ծրագրերի թեմատիկ պլանների ուսումնասիրության հանձնարարական տալու վերաբերյալ

Հանձնարարել ՈԳԱ կենտրոնի տնօրեն Ա. Դաշտոյանին մինչև 2026 թ. մարտի 30-ը իրականացնել ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի միջին մասնագիտական կրթական ծրագրերի թեմատիկ պլանների՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության գնահատում և համապարփակ վերլուծություն:

7. ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի միջին մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլաններում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ՀԱԱՀ գիտական խորհուրդը միաձայն որոշեց Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի միջին մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլաններում՝ բացառությամբ «Այգեգործություն» մասնագիտության կրթական ծրագրի, պիլոտային ձևաչափով կատարել փոփոխություն՝ երկրորդ կիսամյակից առաջ նախատեսված երկշաբաթյա արձակուրդը տեղափոխելով երկրորդ կիսամյակի վերջ:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ՋԱՔՈՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ